№ 11 և 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ և ՆՈՅԵՄԲԵՐ 1888

ZIEGLER

ՀԱՉԱԿ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

„Հնչակը" այսօր լրացնում է իր մի տարեկան հատակը։ Ամբողջ տարին նրա շուրջ գանգատութեամբ բղավում էր այն դժբաղդ կեանքը, որ Հայոց կեանքի անունն է կրում, այն դժբաղդ կեանքը, ուր ուժեղը ճնշում է տկարին, ուր ունևորը, իրև գործիքի, բան եղնում չունևորին, ուր թիւրք, ռուս, պարսիկ բռնապետները, կարծես մի մեանց հետ գաղտնի դաշինք կապած, հատատակամ ձեռքով ձգտում են իրագործել իրենց գժոխային դիտումները, — մարդկութեան հինգ միլիոն անդամներին հալածել, ստորացնել, հատատարեցնել սև հողին և յաւէտ պէս թաղել նրանց այդ հողում։ Հայո՞ց կեանք... Այո՛, նա նմանում է այն նահապետական գերդաստանին, որ տեղ հարիւրամեայ զատամած ծերունի պապը, գրեթէ խապտ քամված ոտից ու խելքից, մնում է դարձեալ նոյն պետը, դարձեալ նրա իրաւատութեան ներքոյ են գտնվում գերդաստանի բոլոր անդամները, սկսած նրա կենդանի մինչև ամենապստիկ թոռիկը։ Եւ այդ պապը մշտական արգելք է յայտնվում նոր կեանքերի, թարմ ոյժերի կամքի, իղձերի, ձայնի ազատ արտայայտութեան. նա դարձեալ նրանց չէ թողնում ազատ կերպով ընդարձակել իրենց ծաւալականութիւնը, աշխատել ու գործել իրենց նորայայտ պահանջների ու ձգտումների համեմատ, ձգտել դէպ իրենց նորայայտ նպատակները, մի խօսքով, նա նրանց ստիպում է վարել նոյն իր, պապի, հնացած, նեղաչրջան ու փթած կեանքը, նրանց չէ թողնում ունենալ նոր կեանք՝ աւելի լայն ու աւելի առողջ, ունենալ իրենց ինքնուրոյն կեանքը։ Այդ նահապետական լիազօր պապը ռուս, թիւրք ու պարսիկ անզուսպ, փթած բռնակալութիւնն է և հայ ժողովուրդը՝ գերդաստանի մնացած բոլոր անդամները։

Այդ յետադէմ, փթած, քայքայիչ կեանքի դէմ „Հնչակը" ահա մարտնչում է ամբողջ տարուայ ընթացքում։ Ցատասկոտ ու գժուարին էր նրա անցած ուղին։ Յետադէմ, չանասէր, բռնակալութեան անամոթ գործիք դարձած հայերը, ձեռք ձեռքի տված մոլեգին բռնապետների հետ, ժողոված իրենց ամբողջ չարանենգութիւնը, անիրաւաբար յարձակվում էին նրա վրայ, հալածում էին նրան.... Բայց հայ հասարակութեան բաւական մասը, դատապարտված լռութեան, այդու հանդերձ ուղղակի ու կայտնակի կերպով շտապում էր ցոյց տալ „Հնչակին" իր համակրութիւնը... Եւ „Հնչակը" շարունակում էր իր պատերազմը, իրեն ոգևորող ու առաջնորդող ունենալով իր սուրբ նպատակը։

Իր յեղափոխական ագիտատորական ու պրոպագանդական գործունէութեամբ արդեօք եղաւ պատճառ „Հնչակը" թէ ոչ — դա առայժմ դատելիք է աշխարհի համար և այդ դատելիքի վարագոյրը կարող է բանալ յոկ տարիներ։ Միայն այնչափ կասենք, որ „Հնչակի" ցանած սերմերը թարմ, ուժեղ ու առողջ են, նրա ուղին — արդար, նրա նպատակը — սուրբ. պէտք է յուսալ, որ առողջ է և այն հողը, որի երկում նա ցանում է իր սերմերը։

Այսօր „Հնչակը" և հայ հասարակութիւնը կանգնած են միմեանց հանդէպ։ „Հնչակը" հանդիսանում է արտայայտութիւն նոյն այդ հասարակութեան մէջ ծագող նոր տարրի, որի ցրված ոյժերը նա ձգտում է համախմբել, որի ձգտումներին նա աշխատում է տալ մի որոշ ուղղութիւն, յայտնի կերպարանք ու հարկաւոր ծաւալականութիւն։ Նա ասել է իր խօսքը։ Եւ այժմ նա դարձեալ դիմում է դէպի հասարակութիւնը, նա դարձեալ կանչում է նրա թարմ ոյժերին, նա դարձեալ զանչում է նրանց ուշի զալ։ Եւ այդպէս, նա հայ հասարակութեանը յիշեցնում է այն մեծ էպոխան (e'poche), որով անցնում է այժմ մարդկութիւնը, էպոխա նոր վերածնութեան, որի պատերազմում կղզվի մարդկութիւնը, և աւելի դօրաւոր ազգութիւնների հետ խառնվելով կանգնեցնան այն ժողովուրդները, որոնք զուրկ են քաղաքական, սոցիալական ու տնտեսական անկախութիւնից ու ինքնուրոյնութիւնից։ Մարդկութեան ներկայ կեանքում այդ նշանաւոր պատմական պրոցէսը պէտք է գրաւէ դէպ իրեն հայ հասարակութեան ուշը ու բանիմաց ուշադրութիւնը, քանի որ այդ պրոցէսը դնում է նրա առջև հայ ժողովրդի „լինել թէ չլինել"-ու խնդիրը։ Հայ ժամանակ

կակից հասարակութիւնը պէտք է և պարտաւոր է լսել այդ լեզուները։ Այդ հիման վրայ «Հնչակը» դարձեալ ու դարձեալ յիշեցնում է հասարակութեանն այն մեծ գործը, հայ ժողովրդական գործը, որի աջողութեան համար նա հասարակութեանը կոչում է գործ դնել իր բոլոր ոյժերը։ Թո՛ղ ապագան լինի դատաւորը հայ հասարակութեան և «Հնչակի»։

Աւելի զօրացած ոյժերով, աւելի հաստատակամութեամբ ու տոկունութեամբ, ունենալով իր ոտի տակ հաստատ հող, «Հնչակը» կսկսէ և իր գոյութեան երկրորդ տարէշրջանը, մինչ նոյն պարզորոշ գծագրած ուղղութեամբ ու ծրագրով, հետևելով իր մի և նոյն նպատակը։

—

Խմբագրութիւնս ծանուցանում է հայ հասարակութեանը, որ աչքի առջև ունենալով «Հնչակի» համարների մինչ այժմ տարածման եղանակի մի քանի անյարմարութիւնները նրանց ստացողների համար, այսուհետև համարների դանազան երկիրներ ուղարկելու եղանակն ու կերպը փոխելու է և այդ պատճառով իր երկրորդ տարէշրջանի ընթացքում «Հնչակը» կհրատարակվէ ո չ պ ա բ բ ե ր ա բ ա բ, պահպանելով իր նախկին դիրքը։

Խմբագրութիւնս յայտնում է՝ իր համախոհներին, որ նրանց աշխատակցութեան ու թղթակցութեան համար բաց են «Հնչակի» էջերը։

Խմբագրութիւնս նպատակը լինելով կարելին չափ անարգել կերպով տարածել հայերի մէջ յեղափոխական գաղափարներ, չի նշանակվել «Հնչակին» ոչ տարեկան բաժանորդագին և ոչ նրա ստանձին համարի գին, միանգամայն վերապահելով հայ հասարակութեան բարի ցանկութեանն ու նախաձեռնութեանը նիւթական օգնել այդ հրատարակութեանը։

ԾՐԱԳԻՐ

—

Տարին աւարտեցաւ։ Ակսած «Հնչակի» առաջին համարներից մինչ այժմ, նոյն այս սիւնակներում մի շարք իրար յաջորդող յոդուածներով մենք առաջադրինք, լուսաբանեցինք, գարգացրինք ու հաստատեցինք Թիւրքաց Հայաստանում յեղափոխութիւն անելու անհրաժեշտութիւնը, յեղափոխութիւն անելու միջոցները, նրա սկզբունքները, նրա նպատակները։

Հետևելով ժամանակակից առաջադէմ գիտութեան, ոգու ամենաթարմ ու հաստուն խղէաշներին ու գաղափարներին, այդ զէնքով թափանցելով մարդկութեան ներկայ հասարակական կազմակերպութեան էութիւնը և նկատելով ուշադիր տիրող ծայրահեղ անարդարութիւնը, որ մարդկութեան շնչին փոքրամասնութեանն առանձնաշնորհումներ տալով դարձնում է նրան իրրև խլրտող, ճնշող ու բռնակալ մարդկութեան լիովին իրաւարդարդ ատելի մեծամասնութեան. համոզված լինելով, որ իրերի այդպիսի անիրաւ դրութիւն այսօրուանից արդէն ինքն ըստ ինքեան դիմում է օրգանական քայքայման ու վերջնական կործանման և որ պէտք է յեղափոխական հարուածով շտապցնել այդ քայքայումն ու մանգամայն վերջ տալ այդ կազմակերպութեան զոյութեանը և դրա անմոթ, անարդար ու արիւնալից ատերակների վրայ կառուցանել մարդկային կազմակերպութեան նոր շինութիւն, հիմնված անտեսական հաւասարութեան ու սոցիալական արդարութեան, հաւասարութեան ու ազատութեան վրայ. ունենալով իրրև անմահ նշանաբան՝ ժողովրդի, բանող ընդհանրութեան կամքի ու իրաւունքի գերիշխանութիւնն (souverainete') ու լիազօրութիւնը և ընդունած իրրև սուրբ սկզբունք ժողովրդի լիակատար ու լիակատար բարօրութիւնն ու զարգացումը,— դիմում էիր այդ գաղափարներով ու զգացումներով, «Հնչակը» դիմեց սարկական լծի տակ հիմնվող հայութեան նրա կենդանի ու թարմ դատակներին նա հրաւիրեց՝ թէ իրրև մարդու և թէ՝ իրրև հայի՝ ճանաչել իրենց պարտքը, կոչումը, իրենց կեանքի նպատակը, այն է՝ ծառայել շարչարվող մարդկութեան մեծ գերդաստանի անդամ ժողովրդներից մէկին, ամենախիստ ու անիրաւ կերպով ճնշված ու սարկացած հարատաս ժողովրդին, հայութեան։

Այդպիսի հրաւէրով դիմելով դէպի հայութեան կենդանի սիրտերն, «Հնչակը» կանանաւորապէս ու հետևողութեամբ զարգացրեց իր հայեացքները և այն գործունէութեան ծրագիրը, որը գործադրելով պէտք է դիմել որոշած նպատակին։

Այսօր «Հնչակն» իր տարեսկզբանութիւնն է համարում ծրագրի ձևով ի մի ձուլել իր մինչև հիմա ասածները, որ հետևեալն է։

—

«ՀՆՉԱԿԻ» խմբի հիմնական համոզումներն ու հայեացքները կայանում են հետևեալի մէջ։

Մարդկութեան ներկայ հասարակական կազմակերպութիւնն ունի իրեն յենարան՝ անարդարութիւնը, բռունցքն ու սարկութիւնը։ Հիմնված անտեսական սարկութեան վրայ, այդ կազմակերպութիւնը մարդկութեան մէջ ծաղեցնում է ուժեղ բռունցքներ, ուժեղ ի խորին, որոնք քաղաքական ու անտեսական զէնքն առած ձեռքը՝ ճնշում, հարատևարում են մարդկութեան ահագին ընդհանրութեանը, բանող աշխարհին, և այդպիսով ստեղծում մարդկային յարաբերութիւնների մէջ անհաւասարութեան անարդարութիւնը։ Այդ անհաւասարութիւնն արտայայտվում է մարդկային կեանքի ամեն ճիւղերում՝ անտեսական, ինչպէս և քաղաքական, սոցիալական, նոյնպէս և նիւթական։ Մարդկութեան շնչին փոքրամասնութիւնն իր անտեսական ու նիւթական մեծ հարստութիւնը, իր քաղաքական ու սոցիալական մեծ ոյժն ու առանձնաշնորհումները դիզել ու գործադրել է ահագին բա

նով ընդհանրության ազատության, քրոջերի ու ազգաների մեծամեծ գնով։ Անվտանգ լիազորությունն, հիմնված մարդկության սուրբ ընդհանրության լիակատարության սարկության վրայ — ահա այն փոքրամասնության սկզբունքն ու նշանաբանը, որ այսօր թագաւոր է համայն աշխարհի։

Իրերի այդ կնճռոտ ու անելանելի վիճակը կարող է բարեկարգել միմիայն սոցիալիստական (socialiste) կազմակերպությունը — Ողջամիտ ժողովրդական օրէնսդրությունն պահպանելով ու միջոցով ասելով ժողովրդի իրաքանչիւր անդամին իսկական կարելիությունն աջակից լինել բոլոր հասարակական գործերի կարգադրությիւններում, սոցիալիստական կազմակերպությունն իրապէս կարհպանէ մարդկային բնական ու անհերքելի իրաւունքները, լիապես կերպով կնպաստէ իրաքանչիւր անձի բոլոր այժերի, ընդունակությիւնների ու կարողությիւնների լիակատար զարգացման, կդարձնէ հասարակական (collectif) սեփականությունն արդիւնագործության բոլոր արդիւնքն ու գործիքները, ներդաշնակ կերպով կկանոնաւորէ մարդկության սոցիալական ու տնտեսական բոլոր յարաբերությիւնները և կհանդիսանայ ժողովրդի կամքի ճշմարիտ արտայայտությիւն։

„Հշնակի" խումբն իր հիմնական համոզումներով լինելով սոցիալիստ, այդ հասարակական կազմակերպությունը յայտնվում է նրա իդէալը, նրա հասարակապատակը հայ ժողովրդի ու նրա հայրենիքի վերաբերությամբ։

—

Ներկայումս թիւրքայ Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապէս ու տնտեսականապէս հանդիսանում է իրրև սարսափելի կացության կերպարի մի չքնայակայ դանդաղաձ։

Տնտեսականապէս՝ ժողովուրդը ծանրաբեռնված է ազգակի և անազգակի բազմաթիւ ու տհաճելի հարկերի տակ, որոնք կընդհանրապատկվում, եռապատկվում են քայքայվող ու տնտեսության կատարյալ թեան յանգած ֆինանսական ճգնաժամերի ժամանակ։ Ժողովրդի հարը շարունակաբար բռնի կերպով յափշտակվում կատարյալ թեան ձեռքով։ Նրա ու իստության արդիւնքը դարձած մշտական պատահ հարստարիչ կատարյալ թեան ու տանջնաչնարհված անձերի։ — այդպիսի պայմանների թակարդում բանտարկված ու չքնայված, ժողովուրդն աշխատում ու բանում է բացառապէս կատարյալ թեանն ու շահամոլ դատակարգերին կերակրելու համար։

Քաղաքականապէս՝ նա լիովին իրաւազուրկ է։ դատապարտված սարսափելի լռության, հյուծիչ հնազանդության, անելանելի՝ իրրև վիկ դատապարտում, միայն՝ երբ իրեն սպանելու աշխատանում է, յանցաւոր՝ եթէ հարատաչում ու լալիս է իր թշուառ դրության վրայ, կրոնքով հալածված, կայք ու կեանք անապահով, մայրենի ցեղերի ասերիչ ու անարդել յարձակումների ենթակայ, և այդ բոլորի շնորհով հասած բարոյական ու ֆիզիկական քայքայման ու նիւթական աղքատության։

Մեր համոզումն այն է, որ այդ թշուառ վիճակից ժողովրդին փրկելու և նրան դնելու համար այն ուղիի վրայ, որը նրան մի՛ այ տար դիմելու դէպի սոցիալիստական կազմակերպությունը, դէպ այդ հեռաւոր նպատակը, անհրաժեշտ է թիւրքայ Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական քաղաքական աղատություն և աղգային անկախություն, որոնք և դառնում են մօտակայ նպատակ։

—

Պահպանելու համար մեկ անգամ ձեռք բերած ազգային անկախությունը և ապահովացնելու համար ժողովրդի յետագայ առաջադիմությունը, որը, նրան պէտք է տանէ դէպի հեռաւոր նպատակը, յագթանակից յետոյ խոկոյն և եթ գործադրելի քաղաքական ազատության պայմանները մենք մեր պարտքն ենք համարում նշանակել այստեղ.

1) Աշխատական ժողովրդական ներկայացուցչություն, Օրէնսդիր ժողով, որ կընտրվէ ազատ կերպով ժողովրդային ընդհանուր և ուղղակի քուէարկությամբ, պատուէր ներով հանդերձ քուէարկողների կողմից և որ կունենայ լիակատար իրաւունք աղգային կառավարչական բոլոր հարցերում։

ա) Ժողովրդական ներկայացուցիչներ կարող են ընտրվել ամեն դասակարգերից։

բ) Օրէնսդիր ժողովի հաստատության տեղը պիտի լինի Հայաստանի նշանաւոր քաղաքներից մէկը։

2) Դահանդական ընդարձակ ինքնավարություն։

3) Համայնական ընդարձակ ինքնավարություն։

ա) 2 և 3 կէտերին վերաբերող. — Հասարակական ամենայն պաշտոն հաստատվում է ժողովրդական ընտրությամբ։

4) Ընտրողության իրաւունք ունի ամեն անձնաւորություն նրա ունեցած հասարակական դիրքի — կարողության և պարապմունքի։

5) Մամուլի, խօսքի, խղճմտանքի, դումարման, ընկերությունների և ընտրողական ազիտացիայի լիակատար ազատություն։

6) Ամեն անձն ու բնակարան անձեռնմխելի են։

7) Համայն ժողովրդի պինաւորություն։

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդի տնտեսական դրության բարենորոգումների մասին, որ պիտի իրագործել քաղաքական ազատությունից յետոյ և եթ, մենք առայժմ կասենք հետևեալը. —

Պետություն ժողովրդի ամբողջ տնտեսական կեանքի պայմանների և կերպարանափոխել ու կանոնաւորել նրանց նոյն իրեն ժողովրդի ձգտումների, պահանջների ու կամքի համեմատ։

Այդուամենայնիւ հարկաւոր ենք համարում [illegible] նակել այստեղ ժողովրդի կեանքի այդ [illegible] ծելի հետևեալ հիմնական պայմանը. — Հարկային առաջադիմող (progressif) սիստեմ սկսած մի յայտնի աստիճանից բարձր եկամուտից և վերացումն անուղղակի (indirect)

հարկերի, որոնց բեռն ընկնում է գլխաւորապէս ժողովրդային բանող ընդհանրութեան վրայ։

Նմանապէս հարկաւոր ենք համարում նշանակել այստեղ ժողովրդային կրթութեան վերաբերութեամբ հետևեալ պայմանը. — Պարտաւորեցուցիչ կրթութեան սիստէմ ամենքի համար։

—

Վերոյիշեալ նպատակներին հասնելու միջոցն է՝ յեղափոխութիւնը, այսինքն՝ պէտք է բռնի կերպով կերպարանափոխել, յեղաշրջել ներկայ հասարակական կազմակերպութիւնը Թիւրքայ Հայաստանում, զորձ դնելով ժողովրդային ապստամբութիւնը։

Յեղափոխական-ապստամբական զործունէութեան ասպարէզն է՝ Թիւրքայ Հայաստանը։

Այդ զործունէութիւնն ամփոփվում է հետևեալ կէտերում՝ —

1) Պրոպագանդա։

Պրոպագանդայի նպատակն է ժողովրդի ու հասարակութեան ամեն շրջաններում արծարծել յեղափոխութեան գլխաւոր գաղափարը՝ ազգային անկախութեան և ընդարձակ ռամկավարական քաղաքական ազատութեան անհրաժեշտութիւնը սոցիալական բէֆորմներ, բարենորոգումներ զորձադրելու համար. բացատրութիւն յեղափոխութեան հիմնապատճառների՝ ժողովրդի ներկայ դրութեան պայմանների, մեկնաբանութիւն յեղափոխութիւն ու ապստամբութիւն անելու կերպերի ու եղանակների, լուսաբանութիւն յաջող յեղափոխութեան յաջորդող խոչընդոտ և եթ իրականացնելի հասարակական պայմանների նշանակութեան՝ ծրագրիս քաղաքական ազատութեան վերոյիշեալ կէտերի հիման վրայ ու սկզբունքների համեմատ, ձգտելով արծարծել ու տարածել այդ կէտերն ու սկզբունքները։

2) Ագիտացիա։

Ագիտացիայի նպատակն է վերականգնել ժողովրդի անկած ոգին, զրգռել նրան թշնամու դէմ՝ օգուտ քաղելով սրա ամեն-մի ճնշումից, զրգռել նրան կառավարութեան և ուրիշ թշնամիների աչքի ընկնող բռնութեան, հարձման, հարստահարութիւնների ժամանակ ընդդիմադրել, զրգռել ժողովրդին իրերի դրութեան դէմ, ամեն յարմար առիթին պահանջել կառավարութիւնից բարենորոգումներ, մերժել հարկ հատուցանել, զորձադրել ամեն տեսակ հակակառավարչական ցոյցեր և այլն...

3) Տէոր։

Տէորի նպատակն է պաշտպանել ժողովրդին, երբ սա ենթակայ է հալածման, բարձրացնել նրա ոգին, յեղափոխական տրամադրութիւն ծագեցնել ու աճեցնել նրա մէջ, յայտնվել համարձակ բողոքող ժողովրդի կողմից կառավարութեան դէմ, և այդպիսով պահպանել ժողովրդի հաւատը զորձի աջողութեան վերաբերութեամբ, խախտել կառավարութեան ոյժը, նրա հզորութեան համբաւը նսեմացնել, սարսափահար դարձնել նրան։ Դրանց կատարելու կերպերն են՝ ոչնչացնել կառավարչական թիւրք ու հայ ամենամեծատակարանձերին, ոչնչացնել լրտեսներին, դատաւորներին։

4) Կազմակերպութիւն։

Մեկ ընդհանուր կազմակերպութիւն բաղկացած բազմաթիւ յեղափոխական ընկերութիւններից, որոնք իրենց մէջ ընտրելով մի-մի անդամ՝ այդ ընտրվածներից կազմվում կազմակերպութեան կենտրոնական մարմինը, Վարչական ու Գործադիր մարմինը, որի շուրջը բոլոր ընկերութիւնները ժողովված, կունենան իրար հետ սերտ դաշնակցական կապակցութիւն։

5) Տեսական-պատերազմական կազմակերպութիւն, բացառապէս տէորական զործողութիւններ զորձադրելու համար։

6) Հիմնել յեղափոխական ընդարձակ կազմակերպութիւն գիւղացիների մէջ։

7) Հիմնել յեղափոխական ընդարձակ կազմակերպութիւն բանւորների մէջ։

8) Հիմնել պատերազմական-ապստամբական կազմակերպութիւններ՝ թէ՛ բանւորների և թէ՛ գիւղացիների մէջ։

Այդ վերջին երեք կազմակերպութիւնների դերն ու կարևորութիւնը մեծ է և նրանց զոյութիւնն անպայման կերպով անհրաժեշտ յեղափոխական զորձի մէջ։ Մի կողմից՝ յեղափոխական մարտի ընթացքի ժամանակ պահպանելով ու աջակցելով յեղափոխականներին, նրանք ինքն ըստ ինքեան յայտնվում են յեղափոխականների ամենակարևոր ոյժը թէ՛ առանձնապէս և թէ՛ ժողովրդի մէջ, իբրև ժողովրդային պատրաստի յեղափոխական տարր և ապստամբական զօրագունդ, և միւս կողմից՝ նրանք հանդիսանում են ժողովրդի մէջ յեղափոխական ոգու ամենընդունակ աճեցնողներ, յեղափոխական մտքեր տարածողներ, և առաւել ևս ներկայանում են պատրաստի տարր ընդունակ աջող ելք ունեցող ապստամբութիւնից յետոյ պահպանելու իրենց ձեռք բերած անկախութիւնը, այնուհետև իրենց ձեռքն առնելու քաղաքական զեկը և հասարակական նոր կազմակերպութիւնը զնելու համար կապիտական սկզբունքների վրայ, այդ ամբողջ ընթացքում պաշտպանելով նոյն իրենց, այսինքն՝ ժողովրդային, շահերը։

9) Յեղաշրջում կազմելու ու զորձադրելու և ազգային անկախութիւն հաշակելու եղանակներն ու նախագիծը չեն կարող հրատարակվել.....

—

Վատառակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի միւս ընակիչների ու ցեղերի, որպիսիներ են ասորիները, եզիդիները, քիւրդերը և այլն, համակրութիւնը դէպի հայ յեղափոխական զորձը և նրանց աջակցութիւնն այդ զորձում, որը միաժամանակ յայտնվում է և նրանց, իբրև նոյն բռնակալութեան ձեռքով ճնշված ժողովուրդների, ազատութեան զորձը։

—

Որ և է պատերազմ մղած այս կամ այն օտար պետութեամբ Թիւրքիայի դէմ՝ պէտք է համարել յարմար բոլէ յեղափոխականների համար իրենց մեծատակայ նպա-

տակն իրագործելու, միակերպ գործունեամբ յետ հրելով ու հարուածելով, ինչպես թիւրք պետութիւնը, նոյնպես և ամեն մեկ օտար տէրութիւն, որ դիտաւորութիւն կունենայ հայ ժողովրդին գրաւել իր դիրքը։ Դրա համար հարկաւոր է կազմակերպված պատերազմական-պատմական այն ոյժերն իրենց գործունութիւնների ժամանակ՝ պատերազմի ընթացքում սկզբից մինչև վերջ՝ ապրելու և բացուածքի դիրք իրենց երկու թշնամիների վերաբերութիւնամբ, որոնց հանդէպ իրենք յարձակվելով հանդերձ երկրորդ հակառակորդ, այդպես ամենայնիւ դիմադրելու կնդունեն կորչել թիւրքիայի դերի խնդիրը հայ ժողովրդի վրայից։ Այդ նպատակով պէտք է ունենալ այդ գործունեութիւնն որպէս նախադիծ, որը կարդանայ վերոյիշեալ պատերազմի ժամանակ պատերազմական-պատմական այն գործունութիւնները գնել այնպիսի հոլի վրայ, որ բացայայտ հետևով որոշելով նրանց բնաւորութիւնը, ոչնչանա՝ ձգտում դէպ անկախութիւն, — այն ոյժերը չպատճառեն գործիք իրենց մեծ թշնամիներից որ և է մէկի ձեռքին՝ ուղղված դէպի երկրորդ թշնամին։

—

„Հնչակի" խումբը համարում է իրեն անհրաժեշտութիւն, որ այսօր հայ յեղափոխական բոլոր ոյժերը պէտք է նուիրվեն բացատրելու թիւրքահայ ժողովրդային դատի պաշտպանութիւնն և այդ անհրաժեշտութիւնն հիմունքները հետևեալներն են. —

1) Հայութիւնն ամենաստուար մեծամասնութիւնը, այն է՝ երկու-երրորդ մասը, կազմում են թիւրքահայերը և նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է։

2) Հայութիւնն այդ մեծամասնութիւնն դատը Բերլինի պայմանագրութիւնն 61-րդ յոդուածի գրութիւնամբ որդեն մնաց է միջազգային իրաւունքի դրական շրջանը և ճանաչված է եւրոպական մեծ պետութիւնների կողմից։

3) Թիւրքիայի քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու նիւթական ամենամեկարդ ու տնտեսացած դրութիւնը և դրանից առաջացող թիւրք պետութիւնն իրեն քաղաքական ինքնուրոյն գոյութիւնն, մնալով հաստատ կործանումը, որին, մեր կողմից նպատակում են եւրոպական տէրութիւնների յանձին հարուածները. որպէս իր եւրոպական թերակղզիում, նոյնպես և Հայաստանում, թիւրքիայի հոլի սիստեմատիկաբար պատասխանները, ընդունելով օտար տէրութիւնների ձեռքը, — այդ բոլորն այսօր իսկ ծայրահեղ քայքայման ու ապքայութիւն են հասցրել թիւրքահայ ժողովրդին, չարտել նրան պանդխտութիւն կորստաբեր հոսանքում, և այդ վիճակի մէջ մնալով, մեր ազատագրումն նա կլինի թշուառ պատուհանի տէրութիւն, որը կիրել նրան թիւրքիայից, և այդպիսով հայութիւնն մեծամասնութիւնը մի բռնապետական տէրիչ ձեռքից ընկնելով մէկ ուրիշ բռնապետական կամ էկսպլոատատոր տէրութիւնն ճիրանները, նրա պատութիւնն և մարդկային առաջադիմութիւնն գործը կլի ասաղվի երկար ժամանակով, տեղ տալով նորանոր թշուառութիւններին, եթէ արդէն այնտեղ այն գործը չմնայ մինչև իսկ մի զուտ երազ։ Հայութիւնն այդ բոլոր թշուառութիւնը պէտք է նախազգուշացնել հէնց այսօրուանից։

Թիւրքահայ ժողովրդի գրութիւնն այսօր հայութիւնն ամենահիմնական կոչն է։ Եւ ամբողջ հայութիւնն պարտականութիւն է այսօր և եթ բուժել այդ հիւանդութիւնը և առաջնորդել թիւրքահայ ժողովրդի ազգային անկախութիւնն ու քաղաքական ազատութիւնը ձեռք բերելու ու հաստատելու յետոյ այդպիսի գործունեամբ չարուանակել ընդհանուր հայութիւնն ազատութիւնն գործը, ազատել օտարների լծից ռուսահային ու պարսկահային և կազմել այդ երեքից մի՝ դաշնակցական ռամկապետական հանրապետութիւն, որ համայն հայութիւնն համար հանրայ կլայնի զիմելու դէպի հեռաւոր նպատակը, դէպ իդեալական հասարակական կազմակերպութիւնը, դէպի սոցիալիստական ալբարը, դէպ ուր պիտի դիմէ համայն մարդկութիւնը։*)

—

Մեկ անհրաժեշտ ծանօթութիւն

Խմբագրութիւնից անկախ պատճառներով որպէս վերը գնահատված „Հնչակի" սոցիալիստ-յեղափոխական խմբի ծրագրի մէջ, նոյնպես և այդ ծրագրի առանձին հրատարակված բրոշիւրում բաց է թողված մի կարևոր կէտ, որ բացատրութիւնն է ազգային անկախութեան անհրաժեշտութիւնն։ Ցանկանում ենք լրացնել այստեղ այդ պակասությունը, որի կարդն է ծրագրում մոտակայ պատակի կէտից խոսքն է եթ։

— Թիւրքահայ ժողովրդի ազգային անկախութիւն ձեռք բերելն անհրաժեշտ է հետևեալ հիմունքների զորութեամբ. —

Մեր համոզումն է, որ հայ ժողովրդի, ինչպես և ամեն մի ժողովրդի, մարդկային առաջադիմութեան համար անհրաժեշտ է ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութեան պայմաններ, որ մենք նշանակել ենք տեղի նեղքի։ Այդպիսի քաղաքական ազատութիւնն անհնարին է կայացնել թիւրք կամ ուրիշ բռնապետական և կամ թէ որ և է այլ թէկուզ նոյն իսկ հայ, իխանական կամ թագաւորական կառավարութիւնների սկզբունքների ու կազմակերպութիւնների հետ։ Այդպիսի քաղաքական ազատութեան պայմանների ընդարձակ ու ապահով գործածութեան միակ զարանտիա (garantie) կարող է լինել միմիայն հանրային ժողովրդային կառավարութիւնը, որը հայ ժողովրդի վերաբերութեամբ կարող է իրագործվել միմիայն նրա ազգային անկախութեան գոյութեամբ։

---

*) Այստեղ առաջարկված ծրագիրը մենք չենք հասկանում իբրև վերջնական կերպարանք ստացած. նա տակաւին կարող է ենթարկվել մասնաւոր փոփոխութիւնների ու լրացումների, եթէ հարկը պահանջէ։ Եւ մենք պատրաստ կլինենք կատարել այդ, միայն հաստատվում մնալով ծրագրիս հիմնական սկզբունքներին ու կէտերին։

ՄԷԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

(Ճէկարագ պատոյտ հայ անօրինական մամուլի շուրջը)

—

Պարոնե՛ր, մանրեցէք ձեր մեծ մեծ խօսքերը, մանրեցէ՛ք։

Թողնենք մի կողմ Հայաստանում անելի յեղափոխութեան մասին խօսողների և գլխաւորապէս՝ զրողների գաղտնութիւնների մեծ մասի խոչոր սխալները, երբեմն տգէտական աններելի կարծիքները. թողնենք մի կողմ նրանց ուղղի խաւսական վիճակը և հայեացքների խառնափնդոռութիւնը յեղափոխութեան և նրա նշանակութեան վերաբերութեամբ. թողնենք մի կողմ այդ նիւթի մասին նրանց մտքերի հակասութիւնների լաբիւրինթոսը, — թողնենք մի կողմ այդ բոլորը, որոնց էութիւնն ու նպատակն ինչպէս մեզ, նոյնպէս շատերի համար դեռ հանելուկ է մնացել

Մենք դրանց մասին կխօսենք մէկ ուրիշ անգամ, երբ կբացատրենք մեր հայեացքներն անօրինական մամուլի նշանակութեան, կոչման և ուղղութեան մասին։ Մեր պարտքն ենք համարում խօսել դրանց մասին, քանի որ հանրական գործի աջողութեան համար անհրաժեշտ է մեր անօրինական մամուլին պարզորոշ կերպով ճանաչել իր կոչումն ու ծառայը և իր ընթերցողներին չենթադրել հակասական հայեացքների լաբիւրինթոսի մէջ, որը կարող է անախորժ հետևանքներ առաջացնել գործի վերաբերութեամբ և կամ, — որ աւելի հաւանական է, — անօրինական մամուլին դարձնել լիովին անընչանակ և, հետևապէս, անազդեցիկ։

Սակայն մի կողմ թողնելով մեր անօրինական մամլում շատ զրողների մասնաւոր խաւսքը, մենք չենք կարող լռութեամբ անցնել նրանց զրուածների մէկ ամենաէական պակասութիւնը, որի մասին, կարծես, նրանք բոլորովին հոգս էլ չեն տանում, և չխօսել այդ պակասութեան մասին հէնց այսօր, „Հնչակի՝" այս տարուայ վերջին համարում։ Եթէ մենք այժմ „Հնչակին՝" այդ չէ արել՝ դրա պատճառն այն էր, որ իր բոլոր 11 համարներում ամբողջովին զբաղված էր աւելի ծանրակշիռ հարցերով, բուն յեղափոխական գործի ծրագրի կազմութեամբ, որ ի մի ամփոփած՝ այսօր գնում է հասարակութեան ասջև։

Թերթանելով մեր անօրինական մամուլի թերթերը, մենք զուր չարչարանք կկրենք, եթէ այնտեղ գտնեղված յօդուածներում փնտռենք Հայաստանում յեղափոխութիւն անելու նպատակը։ Զգաստանալով նրանց մէջ այդ նպատակը, մենք կտեսնենք, որ այդ յօդուածների մէջ նրանց մէկ-երկու առաջարկած յեղափոխական միջոցներն էլ խիստ կազում են իրենց անորոշութեամբ, իրենց մթութեամբ՝ որ ուղղակի հետևանք է պրչ նպատակի բացակայութեան։ Այսպէս, մենք տեսնում ենք, որ այդ յօդուածագիրները ճգնում են կատարեալ մի շինութիւն, — յեղափոխութիւն, — որն իրենք էլ չգիտեն թէ ինչի համար պիտի նշանակվէ, — արդեօք ընտանիքների բնակութիւն պիտի լինի այն, արդեօք պարելու սրահ, թէ արդեօք մէկ ուսումնարանի համար է նա նշանակված։ Այդ երեք նպատակի տարբերութեան համեմատ պիտի և կառուցվէ շինութիւնն այս կամ այն ձև ու կերպով. մի նպատակին հարկաւոր է շատ սենեակներ՝ միջակ ու փոքր, խոհանոց և այլն, միւսին՝ միայն մի մեծ սրահ՝ հարթատակ ու գեղեցկաձև, երրորդին՝ դրանցից բոլորովին տարբեր կերպ ու նախագիծ և այլն... Բայց այդ անորոշութիւնից, այն յօդուածագիրները չենթադրելը կատարելու համար իրրև նիւթեր, իրրև միջոցներ առաջարկում են կիր ու աւազ, իրրև ցեխ, և թարմ ամուր գերանների հետ միասեղ փոքր-ինչ փթած գերաններ էլ, այս վերջինների ամրութիւնից աւելի ազատ լինելու պատճառով։ Եւ այդպէս առաջարկելով, նրանք չեն հասկանում, որ աւազից ու փթած գերաններից կառուցած շինութիւնը միշտ ենթակայ է կործանման։ Կարծում ենք, որ այդ անհերքելի է։ Եւ քանի որ այդ այդպէս է, հետևապէս, հարցնում ենք ձեզնից, ինչու և ինչի համար մի խարխուլ շինութիւն հաստատելու դիտաւորութեամբ բանեցնել հարիւրաւոր, հազարաւոր բանուորներ, որոնց աշխատանքը, քրտինքը, չարչարանքն ու արիւնը հաստատված ենք որ ոչ ոչ պիտի անօգուտ հանդիսանայ, պէտք է ցնդէ օդի մէջ։ Ա՛յ որ չունի իրաւունք այդպէս ծաղրել մարդկային աշխատանքը, զուցէ և կեանքը։ Եւ մերջապէս թո՛ղ կերպի շինութիւն պիտի կառուցանէք, — ընտանիքների, ուսումնարանի համար, թէ իրրև մեծ սրահ, — քանի որ չէք որոշել թէ ինչի պէտք է նա ծառայէ։

Վերջացնելով մեր նամակը, անենք այդ հարցը հետևեալ կերպով. Մի՞թէ կարելի է դեռ պարզ կերպով չորոշած յեղափոխութեան նպատակը, առաջարկել յեղափոխութիւն անելու միջոցներ, և մի՞թէ հնարաւոր է ձեռք զարնել մի գործունէութեան, յեղափոխական գործունէութեան, որի նպատակն անցայտութեան մէջն է թողած, հետևապէս, յեղափոխականներին էլ զատապարտած է չխմանալու թէ ո՞ր պիտի՞ նրանք գնան, ինչի՞ պիտի գիմեն նրանք։ Գուցէ յօդուածագիրները մեզ պատասխանեն թէ՝ յեղափոխութեան նպատակը յայտնված է իրենց յօդուածներում։ — Հայ ազգի և նրա հայրենիքի անկախութիւն, հայ ժողովրդի ազատութիւն։ Գեղեցիկ բառեր, բայց, դժբաղդաբար, միմիայն բառեր։ Հայ ազգի և նրա հայրենիքի անկախութիւն... այս, համոզված ենք ձեզ ասելու, որչափ այդ անկախութիւն խօսքն ուղղակի կերպով հասկացվում է, այսինքն՝ հայ ազգի զատանումն Թիւրքիայից։ Բայց թո՛ղ կերպարանք կուզէք տանայ այդ ազգային անկախութիւնը, թո՛ղ հասարակական կերպերի մէջ կուզէք նա ամփոփվէ, — խիստ պիտի ունենայ հայ ժողովուրդն իր գլխին, թէ հանրային ժողովրդային կառավարութիւն։ Եւ արդեօք ուզում էք ազգային անկախութիւն լոկ զուտ ազգային անկախութեան համար, իրրև մէկ ազգային պարզ խղճ, թէ այդ անկա-

յեղափոխութիւն, — որն իրենք էլ չգիտեն թէ ինչի համար պիտի նշանակվէ, — արդեօք ընտանիքների բնակութիւն պիտի լինի այն, արդեօք պարելու սրահ, թէ արդեօք մէկ ուսումնարանի համար է նա նշանակված։ Այդ երեք նպատակի տարբերութեան համեմատ պիտի և կառուցվէ շինութիւնն այս կամ այն ձև ու կերպով. մի նպատակին հարկաւոր է շատ սենեակներ՝ միջակ ու փոքր, խոհանոց և այլն, միւսին՝ միայն մի մեծ սրահ՝ հարթատակ ու գեղեցկաձև, երրորդին՝ դրանցից բոլորովին տարբեր կերպ ու նախագիծ և այլն... Բայց այդ անորոշութիւնից, այն յօդուածագիրները շինութիւնը կատարելու համար իրրև նիւթեր, իրրև միջոցներ առաջարկում են կիր ու աւազ, իրրև ցեխ, և թարմ ամուր գերանների հետ միասեղ փոքր-ինչ փթած գերաններ էլ, այս վերջինների ամրութիւնից աւելի ազատ լինելու պատճառով։ Եւ այդպէս առաջարկելով, նրանք չեն հասկանում, որ աւազից ու փթած գերաններից կառուցած շինութիւնը միշտ ենթակայ է կործանման։ Կարծում ենք, որ այդ անհերքելի է։ Եւ քանի որ այդ այդպէս է, հետևապէս, հարցնում ենք ձեզնից, ինչու և ինչի համար մի խարխուլ շինութիւն հաստատելու դիտաւորութեամբ բանեցնել հարիւրաւոր, հազարաւոր բանուորներ, որոնց աշխատանքը, քրտինքը, չարչարանքն ու արիւնը հաստատված ենք որ ոչ ոչ պիտի անօգուտ հանդիսանայ, պէտք է ցնդէ օդի մէջ։ Ա՛յ որ չունի իրաւունք այդպէս ծաղրել մարդկային աշխատանքը, զուցէ և կեանքը։ Եւ վերջապէս թո՛ղ կերպի շինութիւն պիտի կառուցանէք, — ընտանիքների, ուսումնարանի համար, թէ իրրև մեծ սրահ, — քանի որ չէք որոշել թէ ինչի պէտք է նա ծառայէ։

Վերջացնելով մեր նամակը, անենք այդ հարցը հետևեալ կերպով. Մի՞թէ կարելի է դեռ պարզ կերպով չորոշած յեղափոխութեան նպատակը, առաջարկել յեղափոխութիւն անելու միջոցներ, և մի՞թէ հնարաւոր է ձեռք զարնել մի գործունէութեան, յեղափոխական գործունէութեան, որի նպատակն անցայտութեան մէջն է թողած, հետևապէս, յեղափոխականներին էլ զատապարտած է չխմանալու թէ ո՞ր պիտի՞ նրանք գնան, ինչի՞ պիտի գիմեն նրանք։ Գուցէ յօդուածագիրները մեզ պատասխանեն թէ՝ յեղափոխութեան նպատակը յայտնված է իրենց յօդուածներում։ — Հայ ազգի և նրա հայրենիքի անկախութիւն, հայ ժողովրդի ազատութիւն։ Գեղեցիկ բառեր, բայց, դժբաղդաբար, միմիայն բառեր։ Հայ ազգի և նրա հայրենիքի անկախութիւն... այս, համոզված ենք ձեզ ասելու, որչափ այդ անկախութիւն խօսքն ուղղակի կերպով հասկացվում է, այսինքն՝ հայ ազգի զատանումն Թիւրքիայից։ Բայց թո՛ղ կերպարանք կուզէք տանայ այդ ազգային անկախութիւնը, թո՛ղ հասարակական կերպերի մէջ կուզէք նա ամփոփվէ, — խիստ պիտի ունենայ հայ ժողովուրդն իր գլխին, թէ հանրային ժողովրդային կառավարութիւն։ Եւ արդեօք ուզում էք ազգային անկախութիւն լոկ զուտ ազգային անկախութեան համար, իրրև մէկ ազգային պարզ խղճ, թէ այդ անկա-

թութիւնը միմիայն մի միջոց էր նկատում հայ ժողովրդի բազմակողմանի անարգել զարգացման համար։ Բուսնալով գաղափարներ Թիւրքիայից, ձեր նպատակն է ապացուցանել միմիայն գաղափարը, իբրև ազգային առանձնութեան մի ցանկութիւն, թէ զուր այդ դէպքում առաջնորդ ունէր հայ ժողովրդի շահերը։

Դուք զարգացում էք նմանապէս հայ ժողովրդի աղատութիւն բառերն իբրև նպատակ, բոլորովին չզանազանելով այդ խօսքերի միջն ազգային անկախութիւն խօսքերի մէջից։ Բայց ճանաչելով այդ երկու մտքերի սրամիտ զանազանութիւնը, ուղղում ենք այն յօդուածագիրների հասցէին հետևեալ հարցերը։ Հասարակական կազմակերպութեան ինչ կերպեր ու պայմաններ են պէտք Հայաստանում, որ խիստէս ժողովուրդն ունենայ ազատութիւն։ Կարծում էք արդեօք, որ ազգային անկախութիւն ձեզ բերելով կանգնէք ժողովրդի դլխին մէկ իշխան, ժողովուրդն ունեցած կլինի ազատութիւն։ Արդեօք այդ դէպքում չի՞ յայտնվիլ, որ ժողովուրդն խակապէս զարձեալ չունէ ազատութիւն, այլ միայն թիւրք սուլթանին կորզելով, վստակած կլինի մի հայ սուլթան, դա, ուրեմն, մի և նոյնն է, ինչ որ բռնակալ սուլթանն է այժմ մեր ժողովրդի համար. դա, ուրեմն, մի և նոյնն է, ինչ որ բռնակալ ցարն իր ժողովրդի համար։ Արդեօք զրան էք դուք ձգտում, — կրակից դուրս զալ ջրում խեղդվելո՞ւ համար։ Արդեօք որոնք են, ձեր համոզումների համեմատ, այն հասարակական կազմակերպութեան պայմաններն ու կերպերը, որոնք խակապէս ապահովում էին հայ ժողովրդի քաղաքական ազատութիւնն ու ազգային անկախութիւնը, որ ուրիշ ոչինչ չէն, եթէ ոչ միայն միջոցներ նրա մարդկային առաջադիմութեան ու զարգացման համար։ Վերջապէս, դրն է ձեր քաղաքական profession de foi-ն, — ահա այն հարցը, որ մենք առաջարկում ենք ձեզ։

Այս բոլոր հարցերին պատասխան մենք ամենևին չենք դանիլ վերոյիշեալ յօդուածագիրների դրուածներում, հետևարար ամենքիս համար էլ խիստ քաղաքաձևված կմնայ նրանց նպատակը, մինչդեռ յեղափոխութիւն խօսքը նրանց շրթներից վայր չէ իջնում։ Զէ՞ որ նպատակի համեմատ էլ պէտք է զործադրվեն յեղափոխութեան զործունէութեան այն միջոցները, որոնք ն ա տ ա տ ա կ ա յ ա ր մ ա ր են. բայց քանի որ նպատակն անպայտ է ձեր յօդուածներում, յեղափոխական միջոցների ն ա տ ա տ ա կ ա յ ա ր մ ա ր ընտրութեան մէջ էլ ծանրակշիռ սխալների առաջանալն անխուսափելի է, ինչ ոչ ստիպ անդամ մենք տեսնում ենք ձեր թերթերում։ Այդ երևոյթը կարող է արդեօք լինել յեղափոխական դրաւոր պրոպագանդայի աջող ազդեցութեան, զարգացման։ Եւ յանուն խակ յեղափոխական զործի աջողութեան, որ մեր ընդհանուր զործն է, մենք կուզենայինք, որ հայ անօրինական մամուլը մէկ անդամից քշէր իրեն պատած մառախուղը և, հետևելով „Հնչակի“ օրինակին, պարզորոշ կերպով ու ամենայն ուղղամտութեամբ ներկայացնէր իր բոլոր հայեացքները հայ յեղափոխութեան մասին, ստաջ բերէր իր ծրագիրը և այդպիսով միանգամայն կանգնելով հաստատ հողի վրայ, վերջ տար իր երկդիմի անախորժ դիրքին։

— . —

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

—

23 Նոյեմբեր, 1888։

Խորունկ ցաւ զգալով կը գրեմ այս նամակ և կը մտածեմ թէ առաջին՝ ուր վերջապէս պիտի հանգին այն հալածումներ, որոնցով կառավարութիւնները մեզ կը վարձատրէ և երկրորդ՝ ուր պիտի հանգի այն յետադիմութիւն, որ հիմակ կը թագաւորէ հայկական կառավարական շրջանների մէջ, պատրիարքարանի և մեր նախատելի և ազգային ազդային ժողովներին մէջ։

Եւրոպական թերթերին մէջ ալ կարդացած կը լինիք այն իրողութիւն որ միշտ նորանոր ճնշումներ հնարելով իր հպատակաց նկատմամբ, թիւրք կառավարութիւն վերջերս անհաւատալի կերպով մը ընդարձակեց զրաքննիչի իրաւունքներ և ատանց արդիւնք առայժմ այն եղած է որ մոտ տասնի չափ հայ թերթեր, օրագիր և ամսագիր, ժամանակաւորապէս, „մինչ նոր կարգադրութիւն“ դադարեցուցած են կառավարութեան հրամանաւ։ Ինչու, կը հարցնեմ, կառավարութեան այդ կարգադրութեան ուղղակի հետևանք այն եղաւ որ առաջնորդաց կարեցին հայ պարբերական հրատարակութեանց թեւեր։ Արդեօք այդ փաստէն իրաւունք չունինք եզրակացնել որ կառավարութեան մեքենայութիւնք ուղղուած են հայերին դէմ. . . . բայառանապէս հայերին դէմ։ Մեր հասարակական կեանքին համար այն թերթերի դադարեցումը զգալի կորուստ մը չէ բնաւին, քանի որ առանց անչափակ ըլլալն ամենուս յայտնի է, ստկայն քաղաքական տեսակէտէն մեզի համբերելի է արդեօք կառավարութենէն այդպիսի ապտակ մը ստանալ. արդեօք այլ ալ ստրկական խոնարհութեամբ և խոհեմութեամբ պիտի տանինք և այդ հարուած ինչպէս չատ մը անգամներ. արդեօք հայոց բոլորը չի պիտի հասնի անխիղճ սուլթանի ականջին։ Կը յուսամ, կուզեմ յուսալ, պիտի յուսալ որ այս պարագային մէջ մեր չատախօս „զորձիչներու“ բերան մաշոց լեզուն փարներին չի ընկներ։ Թէպէտև (խոստովանիլը մեղք չէ այստեղ) իմ այդ յոյսին հակառակ արդէն կը տեսնեմ ինչպէս մեր „զորձիչներէն“ չատեր արդէն կիսաբերան խօսելով թէ կը պաշտպանեն կառավարութիւնն և թէ կը յարձակուին անոր դէմ. առաջինն՝ անիմաստ, երկրորդն՝ տկար, չա՞տ տկար։ Եւ ինչ հեգնութիւն կը թափ երբ հայն կը կարդայ „Daily Cronicle“ անգլիական թերթի վերջին թիւերէն մին որ գրաքննութեան նկատմամբ տեղեկութիւնք տա-

լէն եաք կը կցորդէ սոսր հետևեալ նկատողութիւն. „Թիւրք կառավարութիւն մեծ սխալ և անխոհեմ քայլ կընէ իր այդ նոր կարգադրութեամբ որով դլխաւորաբար կուզէ հարուածել Հայերին։ Ամենց դժգոհութիւն կառավարութենէն մեծ է արդէն և իր նպատակ հարուածներով նա աւելի սիրտ դրդուէ Հայերի դժգոհութիւն իրեն դէմ։" Եւ դժբաղդաբար այդպէս չեմ կրնար մտածել խեղճ հայեր. գիշեր ցորեկ ծեծէ անենց գլուխ տաճկի բռնապետական գաւազանով յիրաւի, ճշմարիտ դժգոհութիւն չեն նկատեր անենց մէջ. հայերն օժտուած են տարաբաղդաբար այն կախարդական կարողութեամբ, որ կրնան դժգոհ ըլլալ չը թ ն ե ր ո վ մինչ անենց սրտեր անդորր, անմեղուչ կը ննջին։ Եւ ճիշդ կը նկատէ „Daily Cronicle" երբ իր նոյն նկատողութեան կուելլցանէ հետևեալը. „Հայոց այդ դժգոհութիւն այն կերպարանք կը ստանայ որ Հայերն իրենց աչքեր կը հանեն Ռուսին վրայ, որ իր կողմէն աջողաբար կոգտվէ այդ պարագայէն։" „Ընչակի" 3-րդ թիւն մեռաւորապէս կը քաղեմ հետևեալ նեմատութիւն որ ինձ շատ ճշմարիտ կը թուի։ Արտակին կողմատն տիրոջ ձեռքէն, բայց մենակ ոգատ ապրելով չը կարենալով իր ապրուստ հայթայթել, նա կերթայ մէկ ուրիշ մարդու մը քով և կը դառնայ անոր ստրուկը, — այդ հայի պատկերն է։ Ինոր դժգոհութիւն չի հանդիպիր այն կէտին որ հայն ցանկանար կանգնել իր տարի վրայ և ազատ ապրէր, այլ անոր դժգոհութիւն այնչափ կըլլայ որ կը չատանայ իսկ գոյ-տաճկին ձեռքէն ազատվելով արջ-ուսին թաթին տակ ընկնիլ։ խեղճ հայ....

Նոր պատրիարք մ'ունինք, որուն ինչ ըլլալը չը գիտցուիր դեռ։ Անցած մ'է անիկա ազգային գործոց մէջ, որ գիտցաւ խաղալիկ սիրտ դառնայ Նաբեանեանց ձեռք։ Ինոր յատկութիւնք են՝ հաստատ համոզմանց բացակայութիւն, բնաւորութեան թուլութիւն և պօրսական „զարթիչներուն" յատուկ „խոհեմութիւն". ասոնք ոգիկ խարհրդատուներ չեն ազգային գործոց մէջ որ այսօր այնչափ կնճռոտ վիճակի մը մէջ կը գտնուին։ Տակաւին պատրիարքական աթոռոյն վրայ չը նստած նա արդէն կը մտածէ ակարացնել Հայաստանի գաւառաց երեսփոխանական ընդհանուր ժողովների նշանակութիւն, խլելով անոնցմէ գաւառական առաջնորդներ ընտրելու իրաւունքը, տալով այն միմիայն պատրիարքարանի։ Կը գուշակեր արդէն այդ քայլի հետևանք՝ հայաստանցիներու դժգոհութիւնը և ժողովրդական ընտրութեանց ոչնչացումը։ Ո՞ր սիրտ ասանի ժողովրդի իրաւանց այդ ոչնչացումը։ Ան-տարակոյս կը ակարացնէ դաւառները և կը զօրացնէ պատրիարքի ոյժը, որ գիւրաբեկ է ամեն տեսակ Նաբեանեանց արջև։ Ամենց յաջորդող խառնակութեանց մասին ազգային գործոց մէջ ես ձեզ կը թողում եզրակացնել։ Տակաւին վեց ամիս առաջ „Ընչակի" իր 6-րդ թիւն մէջ մեր ամեն լրագիրներէն առաջինը հաստատեց և իրեն յատուկ խստութեամբ և համարձակութեամբ նկատեց այն ձգտումն զէպի կառավարական „կենտրոնական-նութիւն", որ կը զեկավարէ մեր կառավարիչ հոգևորականներու քայլերը։ «Ընչակն» այն առեն կրսէր Պատրիարքի նկատմամբ և այսօր մենք կը տեսնենք որ նոյնը կրնէ մեր նորընտիր պատրիարք Աբրահամն որ Հիմակ ամենքիս համար նկատելի դարձաւ մեր ազգային զեկավարաց այդ ձգտումի զէպի կառավարական կենտրոնացում, որ ի վերջոյ սիրտ սիրարացնել Հայաստանի հայ ժողովուրդը և ձգել նորան մեր տիրահմտուս եկեղեցական, ներու ապի առակ։

Հայաստանի մէջ ժողովուրդը միշտ կը տառապի իր դժբաղդ վիճակէն։ Կրնաս խոնարհութիւնք, պանդխտութիւնք անպակաս են. Վասպուրականի և Պոլսոյ գաւառներէն յուրեր կը հոսին քրիստոնեայ նոր վարդապետութեանց, նոր յարձակմանց մասին։ Կառավարութիւն ուրախութենէն իր ձեռքեր կը լվայ գաղանի։ Եր քաղաքի քրդաց և իր կողմէն ալ կը կատարի իր հարատևաբարութիւնք։ Մէր ոգորմելիներ անոր ջնորհ կը քնանան նոր հայ վիպի մը թերթերուն մէջ որ իրենց առաջակ ատենքերուն ուրախանան աւելի հանգիր կը պատճառան, քան ժողովրդի վիճակին վրայ մտածելն և անոր դարման տանելու։ Եւ հիմամ հաստատ բլլայ որ եթէ այդ „զարթիչներ" լռեն թէ Հայաստան յիրաւի կը կարարի՝ այնպէս չեն վրդովուիր և ապրակ հաներ, որպէս զանոնք վեպերի որ չատ անգամ անհամութենէն դառ՝ ուրիշ վայլ մը չունին բնաւ.....

Զ — ն.

* * *

ԵՌԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

6 Դեկեմբեր, 1888.

Մի քանի ժամանակէց ի վեր այստեղի հայ պարբերական մամուլն ազգային կաւանդական կերպերի մէջ կ ն ա ր օ ն ա կ ա ն ո ւ թ ի ւ ն մտցնելու խնդիրը դարձրել է օրուան խնդիր։ Մամանակ երկու հակառակ բանակի, մանաւանդ զանազան ենթակայացութիւնների բանակները սասցել է բուռնական սուր վերաբերութիւն։ Արատնք չանհնարաւոր խուսել Պատրիարքի ընտրած ընթացքի մասին մեր հասարակական գործերում, մեր մամուլի ջղերը լարված էին խիստ կերպով և հարկաւորութիւն էր զգացվում որ և է կերպով վերջ տալ այդ անտանելի դրութեան։ Այնուամենայնիւ չատերն մի քանի կայծեր, որ բանակից յարուցանելու արդէն պատրաստի նիւթ յանկարծից բացասանցին։

Այսպէս են, վիճաբանութեան մէջ մարդ մերկացնում է իր էութիւնը. այդպէս եղաւ այս բանակների մէջ աւելի, քան երբ և է։ Երեսուն են դարձ երկու տարի թիւն, մ'ակը՝ դէմ ամենայն կենտրոնականութեան, միսը՝ պաշտպան կենտրոնականութեան։ Այդ երկու տարբեր հասանքը կրում են երկու սրաչ դրոշ. առաջինը՝ պաշտպան ժողովրդային ազատութեան, երկրորդը՝ պաշտպան հայ առանձնաշնորհում ունեցող դասակարգի, պաշտպան Պատրիարքի։

Եւ յիրաւի, երկու միմեանց հակառակ ուղղութիւններ

հասարակական ասպարիզում՝ հանդիսում են միմեանց. երկուսն էլ պարտաւոր են միմեանց հաշիւ տալու և մի մեանցից հաշիւ պահանջելու։ Կենտրոնականները, որոնց հանար նոյն իրենց սկզբունքի պաշտպանութիւնը ստեղծեց մի ազգ դիրք, պարտաւորված էին շտապել ոնկիզուութիւն, լինել դիմակաւորված. նրանք ջանք էին անում ցոյց տալ թէ իրենք պաշտպանում են ժողովրդին և նրա շահերը, մինչդեռ իսկապէս նրանք պաշտպանում էին տառանձնաշնորհված դասակարգի շահերը։ Կենտրոնականները իրենք քաջ գիտէին թէ ինչումն են կայանում իրենց շահերը, քանի որ նոյն իրենք տառանձնաշնորհված դասակարգի ներկայացուցիչներն են։

Առանձնաշնորհված դասակարգի շահերը պահանջում են ազգային կառավարչական բոլոր իրաւունքների կենտրոնացումը նոյն իրեն, այդ դասակարգի, ձեռքում, Մակարի ձեռքում, որ յայտնվում է նրա պետը և որի առաջ այդ դասակարգը, նոյն իր շահերն աչքի առջև ունենալով, պարտաւորված է, ինչպէս ասում են առաները, «նստի ոտների վրայ պոր գալ»։ Ազգային կառավարչական գլուխը, ազգային հասարակական պաշտօնավարութիւնները և դրանց կարգադրութեան իրաւունքը, — այդ բոլորն այն դասակարգը ձգտում է ամբողջովին հավաքել իր ձեռքը՝ օգուտ քաղելու համար այն բոլոր պտուղներից, որ մէկ այդպիսի դիրք լիաստատ կերպով նրան կարարգելէ։ Ազգային կառավարչական գլուխը, ազգային հասարակական պաշտօնավարութիւնները և դրանց կարգադրութեան իրաւունքը՝ — որոնց մէջ այսօր դեր է խաղում ոչ միայն այն դասակարգը, այլ ժողովուրդը ևս, — այդ բոլորն այն դասակարգը միայն այն ժամանակն է կարող իր ձեռքը գցել, երբ զրկելով ժողովրդին իր այժմ ունեցած իրաւունքներից, ազգային կառավարչական բոլոր իրաւունքները կենտրոնական կենտրոնականութեան սիստեմին, երբ ազգային կառավարչական ամբողջ նախաձեռնութիւնը, այժը և վճիռը կենտրոնացած կլինի Մակարի ձեռքը, կախում կունենայ միմիայն Մակարից, այդ ասնանի պետից արժանի արբանեակների։ Այդ ամենից արդէն առնում էր հոտ այն միապետական սկզբունքի, որով Մակարն, օգնութեամբ իր շահախնդիր ու ստոր արբանեակների, անպատիժ կերպով կհաստատեր գեռնին հայ ժողովրդին և այն ամենը, ինչ հանդիսանում է պաշտպան այդ ժողովրդի։

Դառնանք մեր այլ ցաւին։

Վերջին ժամանակներս նկատելի կերպով շատանում են այստեղ Ջանկոհայաստանից պանդխտող մշակները։ Այդ պանդխտների մեծ մասը Աշոյ և Վանի կողմերից են։ Նոյն իրենց խօսքերին նայած՝ նրանց պանդխտութեան պատճառն ազգաստութիւնն է, զլխաւորապէս տեղային տնտեսական անկարգութիւնից առաջացած։ Այդ անբաղդներն իրենք բոլորովին զոհ չեն իրենց ներկայ դրութիւնից ևս. այստեղ նրանց վիճակը չէ տարբերվում այն վիճակից, որ նրանք ունէին իրենց մայրենի երկրում։ Պանդխտաբանների սիրոը (որ շատերը կարծում են թէ նրա հագած ցնցոտիների տակ գոյութիւն չունի) կրում է ամենածանր բարոյական տանջանքներ իր հայրենի հողի, իր հարազատ ընտանիքի կարօտից։ Ըստ մեծի մասին անբան, նրա երբեմնակի ունեցած գործն էլ հաղիւ նրա օրական կտոր հացի կարիքին է տալիս բաւարարութիւն։ Քաղաքիս բնակութեան ամենաաղքատ մասը կազմում են այդ թշուառները։ Նրանց մեծ մասը շատ տրամադիր է վերադառնալու հայրենիք, այնտեղ շարչարվել, բայց գտնէ միշտ աչքի առաջ ունենալ իր ընտանիքը, քան մնալ այստեղ անօդնական, միակ և դարձեալ շարչարվելը։ Բայց այդ քայլն անելու նիւթական միջոց է նրան պակասում։ Նրանցից շատ շատերը երիտասարդ են, առող տաճկաց կառավարիչներին և ընդունակ ընդդիմահարելու տաճկաց կառավարութեան, եթէ օգնող և ուղեցոյց ունենան։

Մեր «Ինտելիգենտ» երիտասարդութիւնը աստիկ խորշում է պանդուխտ-բանուորների շրջաններից և ոչ միայն «լաղ» չէ անում մոտենալ նրանց դրութեան վրայ և ձգտել նրանց շրջաններում գործել, որ շատ արդիւնաւոր կլինի, այլ և չէ՛ հետաքրքրվում իմանալ նրանց ճշմարիտ պէտքերը, պահանջները, հայրենիքում նրանց դրութեան բարելաւման եղանակները, և մնում է լիովին անտարբեր դէպի նրանց։ Մեր երիտասարդը «ժամանակ չունի» զբաղվելու այդ «մանր-մունր» մարդիկների վիճակով. նա «անձնական գործեր» շատ ունի և կամ նա շատ գրաղմունքներ ունի «հասարակական-գրական ասպարիզում»....

Կամանալէս աչքի ընկնող իրողութիւն էլ այն է, որ պանդուխտ-բանուորների արիւն ծծողները նոյն իրենք հայերն են, որոնք բանուորին «գործ են տալիս ազգասիրաբար» և մէկ-երկու գրչի գնով՝ նրան բանեցնում, շարչարում վաղ առաւօտուանից մինչև ուշ երեկոյ և յետոյ նրան քնացնում դատ գիմոց՝ փոդոցում....

Դ.

ՆՈՐ ՀՐՈՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

—

«Հայաստան», երկշաբթեայ թերթ, կէս հայերէն, կէս ֆրանսերէն, «քաղաքական տեսիլներ» Յ. Պրուսալի, «խմբագրապետ» Մ. Սէվդալի. «բերան հայկական հայրենասիրաց ընկերութեան»։

—

Մեր հանդէպ գրված է այդ նոր թերթը՝ որի նախատակը մենք գտնում ենք հետեւեալ պարբերութեան մէջ. «Պիտի ջանանք յառաջի Եւրոպոյ պահանջել, խաղաղ ժողովրդեր և արժանաւոր (՞·՞) ու օրինաւոր եղանակաւ՝ անմիջական իրականացումն վարչական ու տեղական ինքնօրինութեան, որ խոստացեալ է Թրքա-Հայաստանի Պերլինի 78 թ. դաշնագրոյն 61-րդ յօդուածանով»։

Մենք այժմ մտադիր չենք մանրամասնաբար խօսել 61-դ յօդ-ի մասին՝ պարզելու համար նրա էութիւնը. ոչ համարիս տեղը և ոչ էլ մեր ժամանակը մեզ չեն ներում այսօր անել այդ, որ թողնում ենք մէկ ուրիշ անգամի համար։ Ընչ-չակում մի քանի անգամ մենք ասելիք ենք ունեցել խոսելու այդ նիւթի մասին, ապացուցանելով որ ոչ մի կեր-

պով 61-դ յօդ.-ը չէ ապահովացնում հայաստանցուն այն թշուառութիւններից, որոնց այսօր նա զոհ է. որ ոչ մի տեսակէտից չէ ապահովացնում հայաստանցուն ընդդէմ թիւրք կառավարութեան բռնութեան ու կամայականութեան, որ ոչ մի կողմից չէ տալիս բաւարարութիւն հայաստանցու իսկական պահանջներին ու ձգտումներին։ Իսկ ինչի՞ է ուզում դիմել „Հայաստանը“. — 61-րդ յօդուածի խոստացած „բարեփոխումների իրականացման“, այդպիսով „բարելաւելու“ համար հայաստանցու դրութիւնը։ Եւ մենք տեսնում ենք որ „Երևելի ազգայիններէ չբնաջնջուել „Հայաստանը“ (օ՜, հոստութիւն) իր հիմքին իսկ շարաչար սխալվում է. — 61-դ յօդ.-ը ով նա կարդում է „բարելաւել“ հայաստանցու վիճակը, մինչ այդ յօդուածն իսկապէս ոչ մի հիմնաւոր բարելաւութիւն չէ խոստանում։ Բայց այդ, մենք արդէն շատ տարօրինակ ենք զբաղուում որ „Հայաստանի“ երևելի գրիգորիանները“ իրենց „նպատակ“ են դարձրել „խաղաղաբար միջոցներով“ (եւրոպէրութիւններին ուղղել յիշատակագիրներ, ուղերձներ, գրել յօդուածներ „Հայաստանում“ և այլն), այն էլ „Ֆռանչ կաստանի գրաքննական խստութեանց մեջ ներածին չափ“ զարդարել ամբ մի յօդուած, որի զարդարութիւնն ինքն ըստ ինքեան հայերիս համար չէ կարող նպատակի տեղ ծառայել։ Չէ՞ կարող, որովհետև նրա զարդարութիւնն անմիջական կերպով կախում ունի իսկ եւրոպական պետութիւնների շահերից, իսկ եւրոպական քաղաքականութեան հանգամանքներից թիւրքիայի վերաբերութեամբ և ոչ հայերից՝ քանի որ այդ „նպատակին“ քարոզում են գիտել „խաղաղաբար միջոցներով“։

Աբսուրդ է (absurde), „Հայաստանի“ նպատակը, աբսուրդ են և նրա „խաղաղաբար միջոցները“։ Եւ մենք կրկնում ենք նոյն նիւթի տակ մեր մեկ ուրիշ անգամ տածը. „Այդպիսի ուղղութիւն անբարոյականացուցիչ ազդեցութիւն կունենայ հայ հասարակութեան ու ժողովրդի վրայ։ Ոչ մի ցանկալի չէ վայելել „բարեկարգութեամբ“ („Հայաստանի“ տասնի մեջով), երբ դա խոստանում են տալ տասնց աշխատանքի, տասնց արիւնհեղութեան. և այդ հրաչքը զարդարն այն թիթեղ պատառներն են, որ մի քանի „երևելի հայրենասէրներ“ մի տասնեակ անգամ ազատ ժամին խորհել են ներկայացնել մեծ պետութիւններին։ Բայց այդպիսի փուչ երազներով կերակրել հայ հասարակութեանը, հայ ժողովրդին, յիշատակագիրներ և թերթ հրատարակելով՝ նրան ցոյց տալ, որ դրանք փրկութեան ուսուցիչներ ոսկէ տասներ են, որ օտար տերութիւնները միայն նրանց կարողանն ծանր լծից և այդպիսով նրա ուշն ու միտքը հեռացնել ճշմարիտ զարթից, իսկական զարթունեութիւնից ու ճանապարհից, որանք նրան իսկապէս կարող են տանել դէպի փրկութիւն, և լինել պատճառ նրա անզգայութեան, խրախուսել նրան ծալել իր ձեռները և չարտահայտ ցոյց տալ նրան, որ երկնային մանանայի պէս՝ մեծ պետութիւնների ջանքով կիջնէ բարդը ժողովրդի վրայ և նա կունենայ բարեկեցութիւն, — դա ամենին ներելի չէ, որովհետև եթէ այդ բարդն անվում է անկիրանակցաբար՝ ուրեմն դա մեծաւոր քաջի ու մարդասիրութիւն է, իսկ եթէ դա դիտակցական քայլ է՝ մենք հաւատարիմում ենք դրան անուանել՝ բարդասիրութիւն։“

Այդ բարդի հիման վրայ „Հայաստանը“ մենք համարում ենք անբարոյականացուցիչ ու վնասակար թերթ։

Մենք չենք ուզում դուր կերպով ժամանակ վատնել երևան հանելու համար այն անասուն, անճոռնի, ծանր լեզուով գրած հակասութիւնները, որանցով „Հայաստանն“ ամենուին հարուստ է. հակասութիւններ, ուր նա „խաղաղաբար“ միջոցներ է քարոզում և մի և նոյն ժամանակ ժողովրդին ասում „զարկէք (ինչով) յափշտակիչը“. ուր մի տեղ նա կանչում է հայ կուսակցութիւններին „դադարիլ „Հայաստանի“ գրոչի շարչ“, մինչ մեկ այլ տեղ „երևելի ազգայիններին ու գիւանագէտներին“ յանուն փրկութեան ու զարգացման, ասում. գլխով թափ տալով, ապաստակում է „մենք բարդարդին հետ ենք յեղափոխական թիրթերի“։ Ազատ եղէք, խնդեմ, անմեղ „գիւանագէտներ“, նրանք ձեր քանը չեն վրդովիլ նրանք ձեր դարման ամենին չեն զգում։

Ակ...

— · —

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԸ

„Տ. խորէն Պատրիարք հրատարակեց մի քանի եպիսկոպոսներ անցց հետ խորհրդակցելու համար թէ՝ որպէսզի օգտակար է փոխել թեմական ատաջնորդների ընտրութեան եղանակին։ Ըստ Ամենամարդասիրութեան ատաջնորդները կընտրուին ազգային գաւառներու ընդհանուր ժողովներէն, իսկ այժմ սկսած է կարիք մը (՞՞) զգացուիլ թէ՝ յատուկն (՞) պիտի լինի, որ ատաջնորդներն ընտրուին ազգային պատրիարքարանէ։“ — Գրանք են Կ. Պոլսից հասած վերջին տեղեկութիւնները։

Գարձեալ կենտրոնականութեան խնդիր. գարձեալ ձգտում, à la Մակար, ոչնչացնել ժողովրդական ընտրողութեան սկզբունքը և ազգային գործերի կարգադրութեան իրաւունքները տալ միմիայն պատրիարքին. գարձեալ ճիգ ժողովրդին աւելի ճնշելու, ոչնչացնելու ազգային գործերում նրա միջամտութեան իրաւունքը։

Այժմ Մակար ազգամեան անասնման գաղափարութեամբ կարող է տեսնել (ինչպէս իր կենտրոնականութեան սիրելի գործադրութեան ատաջին փորձն ոչնչ հանդիսացաւ, ինչպէս նա գաւառ ոչ միայն ատատաղերի, այլ և թիւրքատաղերի մէջ այնպիսի գատակարգ, որ այսօր, իր սեփական շահերի գրգռմամբ, ձգտում է Մակարի նախագիծն իրագործել։ Այժմ Մակար ազգամեաց մեծ հրճուանքով կարող է գոչել թէ, իր տեր ատատաց ընդհանրապէս փայփայած իդէն իրականացնելու համար ինքը, Մակարը, ոչինչ չէ խնայում, չէ խնայում մինչև իսկ իր ազգը զոհ բերելը։ Սնատարեցոյց, Մակարը մեզ հասկանում է շատ դեղեցիկ կերպով։ Ատատարեցոյց, մեզ հասկանում են և նորընտիր անարեան խորհուրդ և թիւրքահայ ատատահայ այն ատանձնաշնորհված գատակարգը, որ ներկայացնում ազգային գործերը կենտրոնականութեան սիրելի ենթարկելու։ Ջատագովն է ներկայանում։

Գատ ու թիւրք բռնակալների քաղաքականութիւնների հաւեները գտնում են իրենց լատարար եղբը մեր ազգային գործերի կենտրոնացման սիրելի մէջ։ Երկուսն էլ, իւրաքանչիւրն իր շահի համար, ջանք են անում զրկել հայ ժողովրդին իր այժմեան ընտրողական իրաւունքներից, որ ապակենտրոնականութեան սիրելի նրան տալիս է, յանձնելով այդ իրաւունքները մեկը՝ կաթողիկոսին, մի՝ պատրիարքին։ Երկուսն էլ միակերպ յանուանութեամբ ձգտում են կենտրոնացնել այդ իրաւունքները մի ձեռքի մէջ, որի վրայ բռնանալը դժուար չէ ամենին, որի հետ հաշիւ տալն անհամեմատ դիւրին է, քան ամբողջ ժողովրդի հետ։

Մեզ փոքրով տրդէն յայտնի է (նմանապէս յայտնի է նոյն իսկ ատատաց կառավարութեան մի դատարի գոնամենից) ատատաց բռնակալի քաղաքականութիւնը վերջին

կաթողիկոսական ընտրութիւնների միջոցին։ Այդ քաղաքականութեան շնորհով կաթողիկոսական ընտրութիւնը յայտնում է մի պարզ, մինչև անգամ ծիծաղաշարժ ձեւականութիւն։ Իր կաթողիկոսական ընտրութիւններով հայերը ցարի շնորհով իսկապէս կատարեցին ապուշի գործ։ Դրան հաստատութիւն՝ բաւական է մեզ միայն ասել, որ առաջ այդ քաղաքականութեան արժանի պատուը յայտնվեց ցարի ծառայ Մակարը, որ առելի է հայերին։

Նայելով քաղաքականութիւն է գործածում սուլթանն էլ թիւրքահայերի պատրիարքական ընտրութիւնների վերաբերութեամբ։ Վերջին տասն տարուայ ժամանակամիջոցին անընդհատակ Ցարութիւնը դրա առաջին օրինակը հանդիսացաւ։ Երկրորդ օրինակը պատրաստվում էր լինել Բարթուղիմէոսը, բայց անցեալ տարի սուլթանի այդ ցաւն էլ բաժվեց, քանի որ նրա կամքով Բարթուղիմէոսը փոխարինվեցաւ մէկ անգէտ, անայտ, անօգուտ, թոյլ արարածով։

Այսպիսով հայ ժողովրդի երկու արիւնախում բռնակալներն էլ իրենց կամքի համեմատ նշանակում են, մէկը՝ ամենայն հայոց կաթողիկոսին, միւսը՝ ամենայն թիւրքահայոց պատրիարքին։ Եւ այժմ, ունենալով իրենց ձեռքի տակ իրրև գործիքներ մեր երկու ազգային պետերին, ցարն ու սուլթանը, ամեն մէկն իր բռնակալական թեռերէների տեսակէտից, ձգտում են գրկել հայ ժողովրդին իր ընտրական իրաւունքներից՝ գրանց կենտրոնացնելու համար մէկը՝ Մակարին, միւսը՝ Խրիմեանի ձեռքում։ Եւ այդուհետև այդ երկու անարժանների միջոցով ու միջնորդութեամբ բոլորովին խլացնել հայ ժողովրդի ձայնը, խլացնել նրա կամքի արտայայտութեան միջոցները և ունենալ նոր ու առաջ հաստատուն գործիք ճնշված, խեղդված հայ ժողովրդին լիովին տնտեսելու, լիովին տարիքելու համար։

Այսպէս թէ ինչ է խոստանում հայ ժողովրդին ազգային գործերը կենտրոնացնելու սիստեմին ենթարկելու առաջարկութիւնը։

Եւ, ինչպէս ճիշտ կերպով նկատում է Թիֆլիսի մեր թղթակիցը, առաջադրեր, եմանապէս թիւրքահայերի մէջ գոյութիւն ունի մի գաղափարդ, որի ներքեւները պահանջում են այդ կենտրոնականութիւնը, մի գաղափարդ, որի ներքեւները, հակառակ ժողովրդային ներքեւների, նրան, այդ գաղափարին, բնում են զուրս բերում իրրև ժողովրդի հակառակորդ՝ յանուն նոյն իր, այդ գաղափարի, շահերի ծաղկման։

Այո, մեզնում նկատելի կերպով սկսել է գոյութիւն ունենալ մէկ այդպիսի գաղափարդ, առանձնաշնորհված գաղափարդ, որ պահպանում ամեն բռնաբնական սովորութիւնները, հայկական հասարակական առաջարկում յայտնվում է յետադիմութեան դրչակը ձեռքին։ Եւ զարմանի գործով մարդ զարմանում է արդէն, ինչպէս մտնում է, աճելով, այդ դրչակը, որ իր քարոզները յայտնելու համար զոհեր է պահանջում։ Զարմանում է մարդ, ինչպէս անախորժ վիշտով առաջ ու առաջ է, ասում գարշելի ոճը, արիան ծարաւից սիրտը կրակ կարած։ Զարմանում է մարդ, ինչպէս ծնունդ առած՝ աճում է աճում մի հայրասիրութեան, որ օգուտ բաղելով ժողովրդի անպաշտպան վիճակից, ստանակտանելով նրա իրաւունքները, ծաղրելով նրա ազգասիրութիւնն ու ակարութիւնը, պահպանելով նրան թշուառ վարկական դրութեան մէջ և այդ տեսակէտից օգնելու հարստահարիչ ու բռնաւոր կառավարութիւններին, ձրգում է ժողովրդի սակրեների ու արիան վրայ իր ոնիրաւորութիւնը հաստատել....

Նախաջրհեղեղեան թիւրք կառավարութիւնը թիւրքիայում գոյութիւն ունեցող թերթերի խմբագրութիւններին ցրվել է հրահանգներ մամուլի վերաբերութեամբ։ Նոր օրէնքների մասին։ Գաղափար կազմելու համար այդ հրահանգների մէջեղ Աբդիֆի-փաշան և թիւրք կառավարութիւնը, որ վաւերացրել է այդ հրահանգները, վերին աստիճանի ազիստութեան, առաստղական իդիոտութեան մասին, մենք դուր չենք համարում զատել այստեղ մի քանի յօդուածներ այդ հրահանգներից։

«Մի ոչէք գիտնական և գրական այնպիսի յօդուածներ, — կարգադրում է թիւրք կառավարութիւնը, — որոնք չեն կարող ապագրվել մի հատարում։ Մի գործածէք այդպիսի բառեր՝ «ջարդնակութիւնը փաղը» կամ «ջարդնակելի», որոնք վատ կերպով են լարում մի տեղ։»

Գոնք ծիծաղում էք, ընթերցող, այդպիսի կատիրական իդիոտութիւնից զարմացած։ Հանդիստ եղէք, այդ բոլորը չէ։ Այնուհետ զանում ենք և այդպիսի յօդուած.

«Միանգամայն խոյս տուէք յօդուածների մէջ կարներ թողնելուց և տողերի մէջ բաղմակէտեր դնելուց, որովհետև զանհամայն թղթակցութիւնների ասիթ է տալիս խանգարում հոգու հանգստութիւնը։»

Այդ ինչ անասելի հոգացողութիւն, Աբդիֆի-փաշա, ընթերցողների համար։ Անշուշտ, սուլթանը, այդ «հիւանդ մարդը», իր չափովն է չափել և ամբողջ ընթերցող հասարակութիւնը և ձեզ ընտրած իրեն բժիշկ, նա ձեզ նոյն դերն է կատարել տալիս ընթերցողների ջղերը խնամելու, նրանց «հոգու հանգստութիւնը» պահպանելու համար։

Ահա գարձեալ մէկ օրինակ, որ ապացուցանում է «հիւանդ մարդու» (գործածենք նորընտիրի սուլթանին ուղղված ճառից հետևեալ խօսքը) «գարավազութ և հայրական փաւաւոր հովանաւորութիւնը և խնամքը, որով գարիրէ ի վեր առատարար կվայելէ հաւատարիմ հպատակ հայ ժողովուրդը»։

«Մի ոչէք տեղեկութիւններ օտար թղթակցների անձերի գէմ արած փարձերի մասին, նոյնպէս ոչինչ մի ապագրէք արտաքսմանում տեղի ունեցող ցոյցերի վերաբերութեամբ, ըստ որում չէ, որ գրանցմատնին տեղեկանայ մեր խոսքերի ապարդիւնութիւնը։»

Երբեմն աւելի առաջ։

«Միանգամայն հետաքրքրեցէք անձնաւորութիւնների վրայ որ և է տեղեկութիւններ անելուց։»

«Ոչ մի տեսակէտով մատնաւոր մի ապագրէք անձերի, համայնքների կամ դասակների խնդրագրերը, որոնք գանգատվում են իշխանութեան ղեղծումների դէմ և գրանց մատնին տեղեկացնում են իդիոտութիւնը։»

Օհ՝ կրկին բժշկի զգացան հոգացողութիւն «հիւանդ մարդու» համար, աշխատելով թաքցնել նրա հիւանդութեան ինչութիւնն ու պատճառները։

Շարունակենք արդեօք, ընթերցող.... Ոչ, ոչ, հերիք է. խղճում ենք ձեզ. զայրոյթը մի կողմից և ծիծաղը միւս կողմից խլում են ձեզնից ձեր «հոգու հանգստութիւնը»։ Դերազանցիա եղէք գէպի ձեր բժիշկը. խնդրը չէ խնայել, որ իր գեղը երկասյրի սրի յատկութիւն ունի.....

«Խեղդվողը շոփին էլ է բռնում փրկվելու համար»,

կայ սասացուած։ Դոյնն է պատահել և „հիւանդ մարդու՝՝ հետ Վախկոտութիւնից, տկարութիւնից, որ այդ յօդուածների գլխաւոր յատկանիշն է, չմանալով ինչ անել. չգիտնալով ինչպէս նախազգուշացնել իր վերջնական քայքայումը, իր անկումը, օր, ինչքան դրսի, նոյնքան էլ ներսի հանգամանքներն ու պայմանները սպառնում են նրան, — թիւրքիան, մերձիմահ, ոչ միայն յայտնվում է քամված իր տէրտնական այժերից, այլ և կորցրած իր մուտաւոր գծուծ կարողութիւնն էլ՝ խելակորոյս, ապէտ հրահանգներով ուղում է փրկել իրեն օրհասական անկումից։

Եւ այդ խիստներիմ ձեռին է հայ ժողովրդի ճակատագիրը...

Ուղղամիտ խիստներ, նախաջրհեղեղեան տէրութիւն, ձեր վախճանն էլ կլինի մէկ օր և դուք, անտարակոյս, շատով կգանէք ձեր ցանկացած „հոգու հանգստութիւնը՝՝...

— . —

Ա. Զ Ա. Տ Ո Ի Թ Ի Ւ Ն

—

Ազատութիւն, ով հրապարա, մեծաբարբառ դու հնչիւն,
Երբև քաղցը երևոյթ սաւառնում ես դեռ երկնում։
Հրդոր, յանդուգն, ինչպէս շանթ, բարձունքներից քո անհուն
Մարդկութեան վրայ շարշարված ըղձած լոյսդ մերթ սքվատում,
Լուսատորում խաւարը և ճեղքում խիստ ցասումով
Ընարկութեան ամպերը, որ տիրում է աշխարհում։
Դու գոռ գան դէմ գերութեան, հարատաւ ես սուրբ յոսերով,
Երանութեան ազիւրը դու քո մէջն ես ամփոփում,
Ինչպէս կեանք է պարգևում բնութեանն արևն իր լուսով,
Բազմաշարչար մարդկութեան դու հանգիստ ես խոստանում։

* * *

Ազատութիւն, մի ձայնիդ բանակալին սասկացնում
Իր ամրոցին պարատում՝ գեղ, ոսկեզօծ գահի վրան,
Մինչ բանտի մէջ ամփոփվող սիրտը յուսով խաղացնում,
Մինչ ճնշված ընարկին տալիս է այժ անասան։
Ազատութիւն, մի ձայնիդ զգզգեցնում խոստովանս
Շղթաներն ամրապինդ, որ կաշկանդում ողջ աշխարհ,
Ժողովուրդները շարժվում և երերվում դէն ու դէս,
Ինչպէս ալիք ծովային, ինչպէս ամպեր շանթահար,
Եւ աշխարհը դողդողում նրանց ոտի տակ ուժգնապէս։

* * *

Ազատութիւն, դու տէրն ես բնութեան ամեն տարրերի։
Դու նրանց թողնում ես ազատ ծագել, աճել, զօրանալ։
Արեգն ազատ փայլում է, ամպերն ազատ են երկնի,
Քամին ազատ կարենում ուժգին ու մեղմ միշտ խաղալ,
Ջրվէն ազատ տարածում ալիքներն իր վրդով,
Ազատ լեռան գագաթին ազատ աճում ծառն ու բոյս,
Եւ այնքամբ ժայռն ազատ կոխում թեթև ոտներով...
Ազատ համայն բընութիւն.... լակ մարդ բեզնից զրկած լոյս,
Իրեն համար ընարկի վանդակ հնարել կուզա ձեռով...

* * *

Եւ այն մեկը մարդերից, որ քեզ կարոտ՝ զրկում քեզ,
Փրչէ զրկակ վատատակում, ցաւ, կոխարան նրան բաժին....
Բայց մարդկութիւնը նեխված իր կեղտերից անելու,
Այդպէս երկար չի տարել, թէ նրան կեանքն է թանկագին....
Ազատութիւն, ուխտարհում կը գայ օր քո տէրութեան.
Հրդոր, որպէս որոտ, փայլուն, ինչպէս կայծակը,
Խարանել, իրեն ոգեկան, դու երկրագունոր համայն
Կը գրկես լոյն թեներով և մարդկութեան դրախտը,
Ազատութիւն, դու կլինես, — միշտ մեծ, տիրող անկրծան։

Լ.

Շնորհակալութիւնք ստացվեցան հետևեալ գումարները. — Տ...ա քաղաքից Ց. Զ.-ից 2 ռուբ. Բ. Ք.-ից Ա. Մ.-ից 3 ր., Ս...ա Ք.-ից Պ.-ից 12 ր., Փ. Ք.-ից Ա. Ս.-ից 16 ֆր., Գ...ի Ք.-ից Գ. Ռ.-ից 5 ր., Լ. ստան...ից Ս. Ա.-ից 10 ր. (Զեղ նամակ կգրենք. համարները կգրկենք)։

* * *

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», ազգագրական, գրականական, բարոյական։ Հրատարակութիւն Վիենայի Մխիթարեան Միաբանութեան։ Կը հրատարակվի ամէն ամսոյ սկիզբը։

Բաժանորդագրութեան գինն է՝ տարեկան 8 ֆր. — 4 ռուբ. փոստանոցով՝ 5 ֆր. — 2 ռուբ. 50 կոպ. կանխիկ վճարելի։

Իւրաքանչիւր թիւ առանձին կարժէ 1 ֆր. — 50 կոպ.

Հասցէ. A la Rédaction de la revue „Hantessor". Au Couvent des RR. PP. Mechitharistes.

A Vienne (Autriche), VII. Mechitharistengasse 4.

* * *

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

«ՆԵՂՈՍ», շաբաթական լրագրոյն հայատակն պիտի լինի Ազգային յառաջադիմութեան համար խրախուսանք ծառայել և լինել յօգ Եղբայրասիրութեան և յարաբերութեան ընդ մէջ Օտար և Եղիպտարնակ հայ Գաղթականութեան։

Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամէն տեղի համար 10 ֆր. — փոստանոցն 5 ֆր. միշտ կանխիկ վճարելի։

Հասցէ. A la Rédaction du journal arménien „Neghos", Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).

Խմբագիր - Տէր Անտոն Եշատանի

— . —

— Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետևեալ հասցէով.

Montpellier. (France). — M. Bernard. Poste restante (No25).

Իսկ դրամ՝ ուղարկել.

Bale. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Լոնդոն Հայկական ազատ տպարան.